Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆԻ Ք. ԿԱԼԿԱՐԱ (ՄԱԼԹԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը. Օֆելյա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը. Գիտության քաղաքականության վարչության գիտության քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի ավագ մասնագետ

3. Գործուղման վայրը և ժամկետները. Մալթայի Հանրապետություն, ք. Կալկարա, 2-5 հոկտեմբերի, 2023 թվական

4. Հրավիրող կողմը. Մալթայի գիտության և տեխնոլոգիաների խորհուրդ

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). Մասնակցություն ԵՄ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի ազգային կոնտակտային անձանց ամենամյա հանդիպմանը և ծրագրի ներքո անցկացվելիք վերապատրաստման դասընթացին:

6. Քննարկված թեմաները.

- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակներում սիներգիաների վերաբերյալ փոխհամաձայնեցման քաղաքականության հեռանկարները,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագիրը և կառուցվածքային ֆոնդերի օգտագործումը՝ շեշտադրում կատարելով «Համաֆինանսավորում» գործողության վրա,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի «Համաֆինանսավորում» գործողության շրջանակներում հայտերի ներկայացման վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման առանձնահատկությունները,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրին մասնակցությանը և ազգային հետազոտական ու ինովացիոն կազմակերպությունների հետ

համագործակցությանը խթանման նպատակով Ազգային ռազմավարության մշակման կարևորությունը և հեռանկարները,

- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրում Իսպանիայի Թագավորության մասնակցության փորձն ու ձեռք բերված արդյունքների վերլուծությունը,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության մասնակցության փորձն ու ձեռք բերված արդյունքների վերլուծությունը,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրում Դանիայի Թագավորության մասնակցության փորձն ու ձեռք բերված արդյունքների վերլուծությունը,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրում Իռլանդիայի Հանրապետության մասնակցության փորձն ու ձեռք բերված արդյունքների վերլուծությունը,
- «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի Ազգային ռազմավարության մշակման հմտությունները և առանձնահատկությունները,
- իրականացվող «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի ազգային կոնտակտային անձանց ցանցի բարելավումը և զարգացման միտումները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի ընթացքում մասնակցել եմ Մալթայի գիտության և տեխնոլոգիաների խորհրդի կողմից անցկացվող՝ «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի ազգային կոնտակտային անձանց վերապատրաստման դասընթացին, որի շրջանակներում քննարկվել են ծրագրի շրջանակներում հայտերի ֆինանսավորման հնարավոր տարբերակները, «Համաֆինանսավորում» գործողության էությունը, վերջինիս շրջանակներում համաֆինանսավորման ձևերը և ծրագրի մասնակից տարբեր երկրներում կիրառվող մոտեցումները, ինչպես նաև «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակներում սիներգիաների վերաբերյալ փոխհամաձայնեցման քաղաքականության հեռանկարները և դրա ներդրման առանձնահատկությունները:

Միաժամանակ, դասընթացի ընթացքում պանելային քննարկումներ են տեղի ունեցել «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրին մասնակցությանը և ազգային հետազոտական ու ինովացիոն կազմակերպությունների հետ համագործակցությանը

խթանման նպատակով Ազգային ռազմավարության մշակման վերաբերյալ, փորձել ենք մշակել օրինակելի Ազգային ռազմավարություններ՝ վերլուծելով և համեմատելով դրանց առավելությունները և թերությունները, ուժեղ ու խոցելի կողմերը:

«Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի ազգային կոնտակտային անձանց ամենամյա հանդիպմանը մասնակից պետություններից Իսպանիայի Թագավորությունը, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը, Դանիայի Թագավորությունը և Իռլանդիայի Հանրապետությունը ներկայացրել են իրենց երկրներում այս ծրագրի շրջանակներում կիրառվող փորձը, գրանցված հաջողությունները, այդ թվում՝ վիճակագրական տվյալներ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ընդլայնել ՀՀ-ում «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի նկատմամբ իրազեկվածությունը և հետաքրքրվածությունը, այս ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ, մասնավորապես, կազմակերպել տեղեկատվական օրեր, տարբեր հարթակներով, այդ թվում՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական կայքէջում և այլ սոցիալական հարթակներում պարբերաբար տեղադրել ծրագրի, ինչպես նաև վերջինիս շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ տեղեկատվություն: Ձեռք բերված գիտելիքի և փորձի հիման վրա «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շահառուներին տրամադրել խորհրդատվական աջակցություն դրամաշնորհային ծրագրերին դիմելու գործընթացի, հայտադիմումների կառուցվածքի և տեխնիկական բովանդակության, դրամաշնորհների բյուջեի նախանշման, հայտադիմումների ադմինիստրատիվ փաստաթղթերի լրացման ու ներկայացման գործընթացի վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Քննարկվել են Հայաստանում «Մարի Սկլոդովսկա-Կյուրի գործողություններ» ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ իրազեկվածության և մասնակցության խթանմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև դրանց իրականացման գործում Ազգային կոնտակտային անձանց ակտիվ ներգրավվածության հարցը:

10 հոկտեմբերի, 2023 թվական

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՕՖԵԼՅԱ ԶԱՔԱՐՅԱՆ